

ՀՀ Արագածոտնի փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանի ելույթը Ապարանի մշակույթի տանը՝ բուժաշխատողների օրվա կապակցությամբ

/21.06.2014թ. /

Այսօր Հայաստանի Հանրապետությունում նշվում է Բուժաշխատողի օրը, որն արդեն բարի ավանդույթ է դարձել Ապարանում:

Սիրելի բուժաշխատողներ, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի եւ իմ անունից շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Բոլոր ժամանակներում մեր ժողովուրդը խորին հարգանքով է վերաբերվել բժշկի մասնագիտությանը: Այդպես է նաեւ այսօր, քանի որ հենց ձեր աշխատանքից է մեծապես կախված կյանքում ամենակարեւորը՝ մարդու առողջությունը:

Մաղթում եմ առողջություն ձեզ, հաջողություններ աշխատանքում եւ ընտանիքում: